

4 III/2 Mechtaristengasse
Vienne
Austriehe ՔԱՆՔ ՓԱՐԱՅ ՈՂՔ
Viengce

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՆՈՐ ՕՐԻՒ

ՆԱԲԱԿ ԿԱՐ ՈՅԻԷ ԲՊԲԱԿՑՈՒԹԻՒՆ
ՊԵՏԵ Ե ՈՆՂՂԵԼ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ ԵՐԱԳՐԻ
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագիրներն եւ չեն գարձուիր:
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՊՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՐՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

Գանձի համար	սարկիան	50
»	վեցամսայ	30
Շրջակայից	սարկիան	60
»	վեցամսայ	35

ԱՐՏԱՆՈՒՄՆԵՐ ԶԱՄԱՐ		
Տարկիան	Ֆրանց	18
Վեցամսայ	»	10

ԹՈՒՄՈՑ ԵՒ ԿՊՎԱՍՏԵ ԶԱՄԱՐ		
Տարկիան	րուբլի	7
Վեցամսայ	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐԵՎ ԿԱՆԿԵԿ Է
ԵՒ ԲՊՐԱՏԱՐԻ ՄԱՌԲԸ
ԹԵՐԻՆ ՎԱՐՉՈՒՅԵԱՆ ՎՐԱՅ Է

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Նոր Օր»ի վարչութիւնն հետեւեալ կարեւոր յայտարարութեան վրայ կը հրահրուի Պատ. բաժանորդներուն ուշադրութիւնը:

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՏԻՄԱ ՍՄԱՐԱՏ ՓԱՓԱՋԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՉԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»Ի ԸՆԿԱՎԱԳԻՐՆԵՐՆ ԸՆՎԱԻԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

Այս աւթիւ Եգիպտոսի և Ալլաւասի մասնի արդոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին վճարել իրենց բաժանորդագրիները, նկատելով որ ընկերութեան մը թերթը պահպանելու գլխաւոր միջոցներէն մէկն է բաժանորդներուն կողմէն գտած զործնական քաջալերանքը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ՍՈՒԼԹԱՆԸ

Ինչո՞ք Ռեթրայիցիէն լրագրին մէջ հրատարակուած յօդուածէ մը — գործ գրչին ծանօթ գէմբի մը, որ Զէյթունի վերջին արիւնալի գէպերուն մէջ գործած դեր մը կատարած է — կը քաղենք հետեւեալ շահեկան հատուածները:

Թողուածագիրը դառն գանգատներ ուղղելէ յետոյ քաղաքակիրթ Եւրոպայի հասցէին, հայկական շարժերուն հանդէպ անոր ցոյց տուած անտարբերութեան համար, կը շարունակէ:

«Իրօք, Ապտիւլ-Համիտ, եւրոպական լրագրաց մէջ, յինական խժժութիւնները դատապարտող հեռագիր մը նետելով հրապարակ, Եւրոպացիներն ապուշներու տեղ դրած է. առի նոր ոսկեգօծ դեղահատ մ'է անոնց համար պատրաստուած. ամեն փայտէ կ'ուզէ նետ մը շինել՝ Եւրոպայի աչքին ցըցելու համար իր ցեղին փառքն ու իր մարդասիրական զգացումներու համարը:

Իր վաղըր կուսութեան փայլը չունի դեռ ու իր ձեռքերը միշտ ներկուած են 300 հազար Հայերու, Յոյներու և Կրետացիներու արիւնով: Չինացիները կը գատափետ, որ միսօնարներ սպաննած են, այն պահուն որ իր դիւանագիտական յարաբերութիւնները ձգտեալ կը մնան Ամերիկայի Միացեալ-Նահանգներուն հետ, ու

բոնք Հայկական շարժերուն ատեն սպաննուած միսօնարներու արեան գինն ու կրօնականներուն տուգանքը կը պահանջեն. գեռամիս մը չ'եղաւ, Հալէպի վալի անուանեց Էնիս Բաշան, հրաման տուով անոր բնաջինջ ընկելու հայ տարրը, որ մեծամասնութիւն կը կազմէ այդ նահանգի հիւսիսային կողմը: Ասի Տիգրանակերտի Հայերուն հանրահաշակ կոտորիչն է որ պաշտօնէն հանձնեցաւ 1897ին, Կ. Պոլսոյ Ֆրանսական դեսպան Պ. Գանպօնի մասնաւոր բողոքներուն վրայ:

Սուլթանին կրօնն է առի. Եւրոպացիներու քննչանքը շարք մը, որ միևնոյն ատեն կրօնն է իր արքանեակներուն, նպատակը համարումութեան:

Արդեօք, ինչ ու իր խոշոր մէնտով պաշտօնները ուրչարի կը նախանշին իրենց հօրեղբորդի Չինացիներուն, որոնք կարող կ'ըլլան առաջին անգամ իրագործելու համարումութեան յիսեալը. թուրքերը Կ. Պոլսի իրենց մէկիթներուն մէջ աղօթք ըրին Չինաց համար, և քաջալերանքի նուամակներ դրկուեցան Բէքիւնի թաթարաց, — արիւնարբու մարտիկ — որպէսզի Պորտըրներու հետ զործեն:

Կարմիր Սուլթանը, սաստիկ ցաւ դգաւով թէ ինչ չունի իր նահանգայ ոյր խողովու համար եւրոպական դեսպանները և իր հաստատեցները մղելու համար մինչև Կիւիւնա, շարքել տուաւ Հայերը, Յոյները, Պուլիարները, բոլոր անոնք որ կը նկատէ իբրև հատապետներ եւրոպական քաղաքակիրթութեան:

Մեր Սուլթանն ալ ունի իր Պորտըրները, պաշար պօզուխները, քաղաքներուն ու զիւղերուն մղելիւն խոժանր: Այս Պորտըրները, կայսերական իրաւունքով արտօնեալ, մոլլաները գրգռուած ու առաջնորդուած, նորագոյն զենքերով զինուած, կայսերական զօրքերու հետ մրցանքի ելան աւեր ցանելու ամբողջ Հայաստանի մէջ, և բնաջինջ ընկելու համար բնակիչները, 1894Է, 1897. Ո՛հ, ի՜նչ երկայն ու քստմեկի և այդ Յուլաւաւաւաւի. իժ. դարն իր ճակտին վրայ կը կրէ արիւնոտ թագ մը. այս պարու վերջը նշանակուած է գաղթը ու կարմիր կէտով մը: Սուլթանը չինական շարժերուն վրայ կը ցաւի հիմայ, մինչդեռ թղթատարութեան բոլոր զիւնները փոխադրել տուաւ Երջուրի Բէօշլիք, և վից ամիս ինք անձամբ վարեց մեծ շարժերը 1895—1896. Հօն էր ինք, զուարթագէտ, երբ իր զօրքերն ու Պաշը Պօզուրները, իրենց զոհերը մէկիթ մէկիթ սպաննել յոյժած, քարիւղ թափեցին խոտի գէղի մը վրայ, Ուրֆայի Մայր եկեղեցոյն գոնեան ու պատուահաններուն առջև, և ողջ ողջ այրեցին 12000 Հայ, ձերբեր, կիներ, տղայք, մարդիկ ոչ հօն սպաստանած կին:

Եւրոպական ժողովրդաց օրինաւոր գայրայթիկ վախճանով՝ որպիսի նենգամուտ թեմաք հեռագիրներ յերբուրց... Լի-Հունի — Չանի առանց կարմրելու, կրիւր տարի շարունակ կրնայ աշկերտութիւն լինել մեր լուրի տիրող քով: Սուլթանը չէր որ միևնոյն ատեն իր քարաւազարը — այս-րուան փարիզի դեսպանը — կը դրկի 3 միլիոնի շէրով, գնելու համար պետական մարդաց խիցներն ու մամուլը քանի մը խալտառակ ու սպախանեալ ներկայացուցիչները...:

Նախարարներու կիներուն շքանշաններ կը բաշխէր ցոյց տալու համար թէ իր ազատամտութիւնը առաջ կը մղէր երկու սեռերուն շատարութիւնը պահանջելու ատարման:

Սակայն ահա: աստիկ Հայ կիւնջ պայմանի վրայ մեծ Հայ տիկնոջ մը կողմէն իրական գործոց և հաստատութեանց պաշտօնական Գոնիկիլին ներկայուած համառօտ տեղեկագիր մը, զոր «կիւնջ իրաւունքները» լրագիրը հրատարակած էր այս տարուան 4 և 10 Յուլիսի թիւերուն մէջ:

«Յի կիներուն արգանքները ճեղքուած, իրենց պտուղները շամիրուած և սուխներու ծայրը պտտուած, մանկամարդ աղջիկները զօրքերուն ու թիւրա հօտապետներուն բաշխուած, ասոնցմէ բնաբարոտ, մինչև որ զօրքերը զանոնք լլկել յազեցած, հրացանի բանած են զանոնք շուտեան հրկշայի մարզով մը, կիներուն ստորին որովայնին մէջ գնդակներ պարպելով ու ամբողջ մարմինը մինչև գանկը ծակծկելով»:

Եւ որքէն ներկայ չ'եղանք Եւրոպացիներու սպանմանց: Հայր Սալվադոր Լիւի Ֆրանսական մենաստանի մը վաճառարը, Մարաշի մօտ, Մուսուր-Տէրէյի մէջ մարթուեցաւ Մազհար Պէյին ու յետոյ իր հրոսակին ձեռքով այրուեցաւ: Հայր Սալվադորի ընկերներն ազատեցան, իմ ընկերակիցներու շնորհիւ: Այս դէպքէն բէշ ատեն վերջ, Էյպէզի Ֆրանսական ստացուածքներն ու դպրոցները, Հալէպի նահանգին մէջ, յարձակում կրեցին Պաշը Պօզուրներէն: Քառորդ դար մը կայ որ ֆրանսական ու գերմանական հիւպատոսները թուրքերէն սպաննուեցան՝ ի Սիլանիկ(1):

(1) Մեր կիլիկիցի պատուական հայրենապիցը մտցած է արգեօք որ 1857ին Մարաշի միլեոտանց Միւսթիլին զրուածուի մահ-մետական խուճանը՝ Ալպիլիցի Պ. Գուրմէն հիւպատոսին բնակարանը պաշարեց ու կրակի տալով ողջ ողջ այրեց բոլոր մէջինները, հիւպատոսը, յոյ կիւն ու երկու մատղաշ

Սուլթանի մակիրը որ մեր տիրոջմէն կը տրուի Եւրոպայիներու լաւագունին, Շուրթեղեկէն է:

Չինական խժժութիւնները կը խօսուին. ես կրնամ ապահովել թէ՛ անոնք անհամաձայն մեզմեք են թուրքերու գործածներէն:

Գանք հիմայ վեր հանել երկր գլխաւոր տանջանքները, զորս Հայ բանաստեղծներուն կուսան այս թուրքերը. տանջանքներ, որք կը ծառայեն հատապետութեան ցած ու աղքատից բարքերն այս թուրք ցեղին՝ որո՞ւ ծագումը նոյն է Չինականին հետ. Միւս կայեան ցեղք:

1. Ոստիկանները կը գերծն բանաւոր կեային դուրս, գազաթին վրայ, սեր փոքրիկ շրջանակ մը կը ձեռնեն, զոր ոչինքներով կը լեցնեն, հոգ տանելով որ շրջանակէն դուրս չ'եկնեն ատնք:

2. Բանաստեղծը շիտակ կը կեցնեն և անոր ստեղծն ու ձեռքերը կապել յետոյ, գլխուն գերծուած մասին վրայ կաթիլ կաթիլ կը թափեն գնդանին առաստաղէն կախուած գլխի մը վրայ:

3. Մարդասպան կամ աւազակ բանաստեղծներուն ապականել կուսան զընդանները, յետոյ շուրի խաւ մը կը թողուն ծածկելու այդ ազատութիւնները, որոնց վրայ կ'ուտիպեն պատկիլ դժբաղ Հայը:

Սուլթանն ու իր արքանեակները տեսնել յետոյ Եւրոպայի անտարբերութիւնը Հայաստանի շարժերուն հանդէպ, պահ մը կարծեցին թէ՛ փափագուած ժամը պիտի հնչէր. փորձեցին իրենց իշխանութեան ու իրենց վաւանութեանց արձագանքը տանելու աւելի հեռուն: Անգլիացիներուն պղատոնական պաշտպանութիւնը Հայաստանի նկատմամբ, բաւական սուղի աստաւ Հնդկաց Աֆրիկայի սպասարմութիւնները, որ Սուլթանին համարումական գազափարովը խմբուած էր: Հալի երկու տարի աստը Ռուսները շուտով խեղդեցին թուրքիստանի թեմապետութիւնը Սուլթանին գործիչներուն ձեռքովը պատրաստուած:

Լաւ գիտենք նաև որ տասը տարիէ ի վեր գաւակները, մէկ տղայ միայն ազատելով շուրհի հիւպատոսի պահակին որ կը կուսուր ինչիքը Հասան:

Այս վայրագութիւններն զայրացած՝ Զէյթուն 200 լեռնական զրկէյ Մարաշ, որոնք առանց դժուարութեան տ'ըրջին միջնաբերդին, սրէ անցուցին Միւսթիլին պարագաներն ու արքանեակները, թալլեցին շուկաները, զրաւեցին քաղաքն ու տարի մը միայն կառավարել յետոյ յանձնեցին զանի Պայուզիցի ցեղին, որ Հայ լեռնականացի զանակից ու բարեկամ ճանաչուած էր յետոյ վերագարձան Զէյթուն, լիով լուծելով անպիտան զոհերուն արեան վրէժը: Մ. Խ.

զազանի դաշնագիր մը կայ Սուլթանին որ նայ Գերմանիոյ կայսեր միջև, Ֆրանսայի գեմ- Այն օրն որ այս երկու պետութեանց միջև պատերազմը պայթի, Սուլթանը կը խոստա- Գերմանիոյ 200 հազար զօրքերու արշա- անք մը զրկել թրիփօլի ճամբով Ֆրանս- սայի Ափրիկեան գաղութներուն վրայ և ա- պըրտամբեցնել թունուզի, Ալճերիոյ, Սու- տանի և Մարօքի հաւատացեալները, Ֆրանս- սան խածնելու համար դարշապարէն:

Կը յուսամ թէ այս բաներս չը պիտի պատահին: Կարմիր բռնապետը պիտի խեղ- դուի արեան մէջ, զոր այնքան կը սիրէ թափել, ու իրմէ ստեղծուած համայնամա- կան կառոյցը պիտի փլչի իրեն հետ:»

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՏԱՑՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՊՏ. 9Ի ՆԻՍՏԸ

Շառաշ Շիշմանեան. — Միջազգայ մը կ'ա՛յ տեղի ունեցած իրեն ու Գործ. Ժո- ղովոյ տնգամաց միջև:

Սիլաս Բիւրաս. — Միջազգայ չ'կայ. նախ Մայր-Դիւանի Ա. Առնապետ Տիար Տօգդ. Յակոբեանի, յետոյ անգամակիցներէ Տիար Կ. Ջալապեանի միջոցաւ ու փափակ կերպով խնդրուած է Տօգդ. Էլիեանէ հրա- ժարիլ. սակայն ինք՝ միշտ պահել փափա- քած է իր աթոռը:

Սիլոն Զրոյեան, Հաշուակալ Գործ. Ժողովոյ. Ես առաջին օրէն զիտի որ Տօգդ. Էլիեան անկարող է Առնապետութիւն վա- ռելու, սակայն կուզի որ վայելուչ կերպով մը հրաժարեցնէնք զինք:

Արսաշէն Յովսէփեան. — Քանի որ Տիար Սիլոն Զրոյեան գիտէ Տիար Տօգդ. Էլիեանի անկարողութիւնը, պէտք չ'ըր որ ինքն իբրև Գործ. Ժողովոյ անդամ, և ընկերութեանս շահերուն պաշտպան, հանդուրէր անոր երկար ատեն նոյն պաշտօնին վրայ մը- նալուն, ընդհակառակն, պարտէր բռնաձև մը պատրաստել անոր հրաժարեցումը խնդ- րող:

Սիլոն Զրոյեան. — Վեցերորդ նիս- տի ընտրութիւնն ապօրէն էր, քանի որ ես մինչև այն իրիկուան ժողովի նիստը՝ բնաւ տեղեկութիւն չ'ունէի Առնապետ փոխելու պէտքին կամ գիտատրութեան մասին:

(Հօս Տիար Նախագահը դիտել կուտայ թէ Տիար Ս. Զրոյեան քիչ մ'առաջ յա- տնի յայտարարեց թէ ինք առաջին օ- ղն գիտէր Տօգդ. Էլիեանի անփորձութիւ- նը, բայց կուզէր վայելուչ կերպով հրաժա- րեցնել զինք:)

Սիլոն Զրոյեան. — Քանի որ հիմայ բացակայ է Տօգդ. Էլիեան, չ'եմ կրնար խօ- սիլ նոյն օրուան նիստին վրայ. ես արդէն, 'ի վաղուց անտի գիտնալով Տօգդ. Էլիեան- նի անփորձութիւնը, առնապետութեան հա- մար իմ քուէս առաջին օրը տուած էի Տիար Սիլաս Բիւրասի, և ո՛չ թէ Տօգդ. Էլիեան- նի. մինք արդէն առաջուց խորհած էինք վա- յելուչ կերպով մը հրաժարեցնել Տօգդ. Էլի- լիեանն Առնապետութենէ, տեսնելով քանի քանի նիստերու մէջ անոր վարչական ան- փորձութիւնը:

Նախագահ. — Շա՛տ լաւ, Տիար Զը- րոյեան, որքան ինչո՞ւ համար քիչ մ'առաջ կը պնդէիք թէ մինչև վեցերորդ նստին իրիկու- նը տեղեկութիւն չ'ունէիք այդ մասին. կար- ծեմ թէ հակասութեան մէջ էք:

Յակոբ Բիւրֆանեան, Գանձապետ Գործ.

Ժողովոյ: Ես, երբ քուէս տուի Տօգդ. Էլի- լիեանի, Առնապետութեան համար, Ա. նստի մէջ զգացի սխալ. բայց, Դիւանի փո- փոխութեան կամ անփոփոխութեան համար քուէարկութեան ատեն, որ տեղի ունեցաւ վեցերորդ նստին, չ'փրաւորելու համար Տօգդ. Էլիեանի անձնասիրութիւնը, ճերմակ թուղթ տուի քուէի տեղ, թէ և բոլոր ընկերներէս աւելի լաւ հասկցած էի անոր անփորձու- թիւնն և առնապետութեան անյարմարու- թիւնը:

Սիլոն Զրոյեան. — Ամենք ալ գի- տենք որ Տօգդ. Էլիեան Առնապետի պաշ- տօնը վարել չ'գիտեր, սակայն ապօրինու- թիւնն հօն է որ վեցերորդ նստին մէջ Տիար Սիլաս Բիւրասի Առնապետութենէն հրա- ժարումը պէտք էր նկատի առնուէր, և այնու- հետև Առնապետին հրաժարեցումը պա- հանջուէր, քանի որ Տիար Բիւրասը գրաւոր հրաժարական մը տուած էր Տօգդ. Էլիեանի:

Շառաշ Շիշմանեան. — Կը սխալի Տիար Զրոյեան. նախ պէտք էր կարեւորու- թիւն առնապետի խնդրոյն, քանի որ նա՛ պիտի վարէր ժողովը. պատշաճ էր, օ- ռակարգի միւս մասերը յաջորդ նստի մը յե- տաձգել:

Ետնադր Գարագաշ, Անգամ Գործ. Ժողովոյ Ընկերներու 'ի հարկէ կը յիշեն որ Տիար Տօգդ. Էլիեան, վեցերորդ աղկալից նստին վերջը մեկնելու պահուն ծոցէն հա- նեց Առնապետին հրաժարականը. հետևա- բար, Ա. օրակարգի մէջ Առնապետի հրա- ժարումը չ'կար, ու ասոր պատասխանատուն է Առնապետը:

Նախագահ. — Կը յուսամ թէ Տօգդ. Էլիեանի խնդրը պէտք եղածէն աւելի լաւ տարանուած է. եթէ կարելի է, փակենք: Տի- ար Նախագահին առաջարկը բացարձակ ընկերութեանը ընդունուելով ինչպիսի փակ- ունցաւ:

(Շարունակելի)

«Նոր Օր»ի վարչութիւնը կը խնդրէ Արտասահմանի ու կողմասի արգոյ բաժանորդներէն որ հաճին պահանջել երկտողով մը «Նոր Օր»ի պակաս ստացուած թիւերը, որոնք պիտի զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր» ստացող բոլոր կողմասի հայ թեր- թիւու ու Հանդէսներու Պատ. խումբ- բաղկիւններէն որ իրենց հրատարակու- թիւնները փոխանակեն «Նոր Օր»ի հետ:

ԴԱՍԱՐԱՆ

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՏԱՑՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Այսօրուանէ կ'սկսին զիշերային դասախօսութիւնք, առայժմ շարաթը երեք անգամ. երեքշաբթի. հինգշաբ- թի և շաբաթ օրերը, երկուշիւան ժա- մը 9 էն մինչև 11:

Փափաքողները պէտք է որ զիմեն խմբագրատունն ու արձանագրուին:

Ամեն սեանող որ պիտի հետևի զի- շերային դասընթացքին, պարտի ար- ձանագրուիլ, վճարելով նախ 10 դր. ողջ, մուտքի տուրք, և ամեն ամիս 10 դր. ողջ կանխիկ, դասառութեանց հա- մար:

Գասարանին հասոյթը կը վերաբե- ռի ընկերութեան. ուսուցիչներն անձ- նուիրաբար պիտի դասախօսեն:

Ստացանք ժրնէվէ, Սօցիալիստա- կան օրգան, ՀԱՆԴԷՄ նոր ամսագրին

1. թիւը, սկսեալ 1900 Օգոստոսէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1. Հանդէսի հրատարակութիւնը. * *
- 2. Հայ Սօցիալիստ կուսակցու- թեան վ. վահանի.
- 3. Հայկ. յեղ. ծագումը և պատ- ճառները. Ա.-ԼՆ.
- 4. Սօցիալիզմ և գիւղացիներ. Ժ. Ժուէսի, (չարուն.) թարգմ. Տիկին Ա. Երուանդեանի.
- 5. Սօցիալիստական Գրոնիկ. Լ. Ա- ընդհան.
- 6. Սօցիալիստական Մամուլ. Ա. Վանանդեան.

ՄԱՐԴԱՊԱՆԻ ՔԱՆՆԵՆԻՆԳԱՍԵԱԿԸ

Սոյն վերնագիրը կը կրէ «Լ'Օրօր» ազատական ու հայասէր թերթին 31 Օգոս. կարեւոր յօդուածը, որուն թարգ- մանութիւնը կը գտնուի ստորև, և որուն հեղինակը Պ. Իւրպէն կոչուէ՝ երբէք չէ՛ դադրած իր ձայնը բարձրացնելէ, աշխարհի լսելի ընելու համար հայ- կական շարժերը: Պ. կոչուէ կարեւոր խմբագիրներին մին է «Լ'Օրօր»ի, ո- ռուն գէ՛մ: Սուլթանն անցեալ տարի դատ բացած էր, ու յետոյ հակառակ արդիւնք գուշակելով, յետս կոչում ըրած էր:

Ահաւասիկ թարգմանութիւնը. «Սիկիլիոյ ու Միլանի անթիւ զո- հերուն, Եթովպիոյ մեռնիւնուն, իտալական թիրաբնի մարտիրոսնե- ռուն վրիժահանը Պրէսչի, ահա՛՛ կը հանուի տիրապետներու արգարու- թեան առջև:

Դատեցին տնի երկաթէ վանդակի մը մէջ, դատապարտեցին անի մըջ- սարգել բանտին, պայմանով որ նա- խապէս քառէ տանջանքի տառը տա- ըրներ: Դրամապաշտ թերթիքը սի- բայթար կը թուեն շարժարանքները, որ անոր պիտի արուին, մինչև որ խելագարի կամ թէ՛ ցեղափոխութիւնը զանի փրկէ հանէ զնոսնէն:

Վաղը Կ. Պոլսոյ Մեծ-Մարգա- սանը պիտի մտնէ իր թագաւորութեան 23րդ տարին: Տերութեանց զեպաններն ու արտասովոր պատուիրակները պիտի ընծայեն անոր յարգանք ու մար- թանք:

Այս քառորդ դարու մէջ, Այսո- իւլ-Համիտ սպաննեց զբիթէ առանց դադրելու: 1893է 1896ի մեծ ջար- դերուն, ամենանըբին վայրագութիւն- ներով խողտողեց ժողովուրդ մը բու- վանդակ, ժողովուրդ մը ժիւր ու հու: Երեք հարիւր հազար Հայեր անցան սուրէ, թէ՛ Պոլիս, թէ՛ Ասիա. հա- ըրաւոր հազար կիները, մատղաշ աղջիկները, տղայքը խոշտանկեցին, լլկեցին, անգամատեցին, ողջ ողջ այ- ընցին. որդիները կտրտեցին իրենց հօր ծնկերուն վրայ որ իբր կոճը ծա- ուայեցին. ասոնք եղան ջարդի մեծ չըջանները: Սակայն զենումը բնաւ չէ՛ դադրած բոլորովին: Չանցնիր շա-

բաթ մը որ արեւելեան թղթակցու- թիւնները չ'գուժեն նոր տրամներ. գիւղեր հրդեհուած, քանի քանի հա- ըրաւոր բնակիչներ կոտորուած կամ իբր գերի ծախուած:

Չկայ ցիղ մը, ճիւղին կատաղու- թեանէն գերծ: Վանդեց աւերեց իր կայսրութեան բոլոր նահանգները, մերթ ընչաբաղցուցութենէ, մերթ գա- ղանութենէ: Յիսուն հազար թուրքեր կրեցին Հայոց հետ միկնոյն բազըր, իրենց երկրին վերածնութիւնը բաղ- ձացած ըլլալու յանցանքով: Ամեն օր կ'անհետանան գէմքեր, ւրոնց վրայ ա՛լ բառ մը չ'լսուիր. մէկ բառով կո- ռան անոնք: Տղայք կը վերցուին կըր- թարանի նստարաններէն ու կը վը- տարուին Ափրիկեան Տրիպոլիոյ թիա- րանները, անպատշաճ քառեր արտա- սանած ըլլալու յանցանքով: Բանտե- ըր կը վառան զոհերով, որոնք ողջ ողջ կը նեխին, մինչև իրենց փորը՝ հստած ջուրի մէջ թալուած կամ մուկերէ կը ծուած ու լափուած:

«Վաղաքակիրթ» Եւրոպայի կառա- վարութիւնները զիտեն ասի: Վաղա- բակիրթ Եւրոպայի կառավարութիւն- ներն օրն օրին իրենց պորձախալաց սեղեկագիրներէն ծանօթութիւն ստա- նալով, պիտի կրնային, գրեթէ քանի մը հազարի մտաւորութեամբ, ըսել թէ՛ կարմիր Սուլթանը քանի՛ մարդ մեռցուցած է. 500 հազար, կամ թէ՛ կրկինը: Ու պէտք է գիտնալ թէ՛ նուազագոյն հաշիւը տուած կ'ըլլա՞ր աս- սով. բայց կառավարութիւնները կը լռեն, որովհետև իրենց հակամար ան- յազութիւնները լուրջութիւն կը պատուի- ըն իրենց, և մանաւանդ, որովհետև մարդասպանն իր անպատիժ մնալը կը վճարէ ուկիով. իր ժողովուրդին կողմ- պատաները, իր արկիւններուն մէջ զիզ- ուած, կամ անշարժ կառուածներու վերածուած, իրեն կը թոյլատրեն կա- շառել մամուլ նախարարները:

Բաց աստի, հրոսակներու սէնսիֆա- ները, որ կը թագաւորեն ժողովուրդոց վրայ, ինչ իրաւունքով իրենց կ. Պոլ- սոյ եղբայրակցին սճիւններն երեսին կրնան զարնել: Կը տեսնէ՞ք ուսա- կան կամ բրիտանական կառավարու- թիւններն որ թուրքիոյ մէջ դատա- պարտեն ինչ որ իրենք կ'ընեն իրենց անհուն կալուածներուն չորս անկիւն- ները: Կը տեսնէ՞ք ֆրանսական կա- ռավարութիւնը որ խարանէ օսման- եան զահիճները, մինչդեռ հեռուները ճամբորդող մեր սպանները՝ ջարդը, բռնաբարութիւնը, թալանը, հրդեհը, մարգիկեղէն մարմինն առուտուրը կը պատցնեն բովանդակ ցամաքներու վրայ, եռագոյն դրօշակին շուրին տակ:

Այն պահուն սր բոլոր այս շարա- գործները կը խուժեն դունգազունը Թայրապոյն-Արևելք, կը յարձակին հանդարտիկ Չինաց վրայ, կը ուժաւ- կոծեն ու հրացանի կը բռնեն անպաշա- պան մարդիկ, անոնցմէ երկիրնին գողնալու կամ թէ՛ փրկանք մը փըր- ցնելու համար, ինչ երեսով բարոյա- կան պիտի կրնան դասախօսել Եըլ- սըզ-Վէօշիկ շնապային: Ժողովուրդ-

ներէն պէտք է ծագի արգարութիւնը
ժողովրդոց գահիճներուն դէմ:

Տիրապետները լաւ կ'զգան տախ-
իբ սակիի գեղերուն մէջտեղ, իր
Ալբան թիկնապահներուն հրացան-
ներուն ետին, իր գրպանները զար-
դարող բոլոր զոհարակուս շրջահար-
ներով, Սէլամալէքներուն ու իր ա-
րիւնտա թախիբ պահելու եկող դեւ-
պաններուն ստորնութիւններուն մէջ-
տեղ, Ապտիւլ-Համիտ սոսկումի մէջ
կ'ապրի: Երկու գիշեր շարունակ մի-
եւնոյն տեղը չ'պրակիր: Ամեն ան-
կիւնները դարանած կը տեսնէ մահը,
իւր իսկ ձեռքով կ'սպաննուին իր հա-
րազատ զաւակները, ա՛հ ու դողի տագ-
նապններուն մէջ:

Հոռոմ, Ումպէրթօ թագաւորին թագ-
ման հանդիսին, յանկարծական խառ-
նակութիւն մը ծագած է թագաւորին
մէջ. որովհետեւ ժողովուրդը շարժում
մ'ըրած էր, իշխաններն ու բոլոր իրենց
չքեղազարդ սպասուորացիները, զօրա-
պետները, և սենեկապետները, դողի
բռնուեցան: Իրարու վրայ խոնկեցան
հօտի մը պէս և իրենց սուրբըր քաշե-
ցին երևակայական թշնամիներու դէմ:
Այս նկարը պէտք է պահէ Պատմու-
թիւնը: Այս դարուն, տիրապետները
15 միլիոն գերիներ սպաննեցին. գե-
րիները չ'սպաննեցին կէս երկվեցեա-
կէ աւելի տիրապետներ:

Տիրապետները կը խորհին յետ-
նեալը: Տիրապետները դատարաններ
ունին, պահակներ, դահիճներ, գեղիներ-
ուն գէմ ինքզինքնին պաշտպանելու
համար: Ինչո՞ւ համար ժողովուրդնե-
րը չ'ունին իրենց Արգարութիւնը:

Տիրապետները կը դողան, վասն են
անոնք. ինչո՞ւ ժողովուրդներն աւելի
վասն են: **ԻՒՌՊԷՆ ԿՈՂԻՅԷ**

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք «Թէգթէրէյի իւլէմա»
վերնագրով տետրակ մը, Գահիրէի
օամ. տպարանէն լոյս տեսած. հեղի-
նակ Տամատ Սահմանու բաշա. կը
պարունակէ տեղեկագիր մը և առ
Սուլթան Ապտիւլ-Համիտ ուղղեալ
շահեկան նամակ մը:

ՍՈՒԼԹԱՆՆ ՌԻ ԴԱԻԸ. — Սեպտ.
6 թուականով կը գրեն կ. Պոլսէն.
«Պալատին զըրցներէն կ'իմացուի
թէ՛ յորեկանին առթիւ զգացած ու-
րախութիւնը Սուլթանին՝ ցնդեցաւ ի-
մանալով թէ՛ նոր դաւազանութիւն մը
նիւթուած էր իր կեանքին դէմ: Ապ-
տիւլ-Համիտի բժիշկը Մուզիմ Պէյ
գտած է դաւը հինգ շաբթի իրիկունը:
Դաւազանութեան հեղինակներն են և-
զեր կին մը, երկու իմամներ ու պա-
լատէն երկու բորձրաստիճան պաշ-
տօնեաներ: Ամենքն ալ ձերբակալ-
ուած են, ինչպէս նաև 118 անձինք:
Գաղտնի քննութիւն մը առաջ կը
տարուի:

— Յառաջիկայ ամսուան սկիզբնե-
րը Սուլթան պիտի մեկնին Եգիպտոս
սի սնդիական բանակէն 300 զօր-
քեր, որոնք խարթում պիտի հաս-
տատուին:

ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԱՍՐԻՉ 12 Սեպտ. — Զուրեղացի
մը ձերբակալեցին Սէն-Սեպտուէնի
մէջ. քովը գտնուեցան թուլթիբ ու-
րոնք Տէրութեան մը պետն սպաննելու
խորհուրդը կը հանեն երևան:

ԼՕՐԷՆՉՕ-ՄԱՐԻՉ 12 Սեպտ. —
Նախագահ Գրուկէր հոս հասաւ. մօ-
տերս պետի նաև մտնէ Եւրոպա կը-
թալու:

ԼԻՆՏՐՈՒ 12 Սեպտ. — Թայմը կ'ի-
մանայ Բէքիւնէ թէ՛ կայսրուհին ու
իշխան թուան ծրագրած էին սպան-
նել դեպատաններն և թէ՛ Պատօն Գէթ-
լէր սպաննուած է կայսերական հրա-
մանով. դեռ որ և է ջանք մը չ'կայ
ձեռք ձգելու Պոքսըրներու պետերը:
Ռուսերը գերիշխանական դիրք մը
բռնած են, իսկ շաբօնցիք կրկրու-
րական, որոնք կը գանգատին անգ-
լիական ուժին քիչ կարեւորութիւն տըր-
ուելուն:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՅ

ՄԵԿ ՆԻՍՏԸ

(Շար. Սախուրը թիւէն և վերջ)

ՅՈՎՃ. — Մտտուկ մը կազ զրկած է Ժո-
ղովներու համար վառուած կազն պետէ...:

ՏԻՐ. — Ահաւասիկ բան մ'ալ, գոր մե-
նէ և ոչ սէկը խորհած է ընել և գոր կ'առա-
ջարկեմ սոյն նստին ատենագրութեան մէջ
մասնաւորակօ յիշատակել...:

ՍԱՐ. — Ո՛չ, Ատենապետ էք. ոչ...
չ'եմ ընդունիր...:

ՅՈՎՃ. — Այո՛, այո՛...:

ՍԱՐ. — Ո՛չ... եթէ...:

ՅՈՎՃ. — Իշթէ եթէ մ'եթէ չ'կայ, Պ.
Փէշիվանեան... չէ նէ վազը կազը ետ կը
զարձնեմ...:

ՏԻՐ. — Ո՛չ դուք կազը ետ պիտի դա-
ձնէք ո՛չ ալ Պ. Փէշիվանեանի փափկանկա-
տութիւնը մոռացութեան պիտի ենթարկուի...
Անձնադպրոցի դաւաճողը, կը խնդրեմ,
Ատենապետը կ'էֆէտի... առաջարկութիւնս
նշանակեցէք որ չ'մոռացար արձանագրել...
ժողովն ալ իւր խորին գոհունակութիւնը կը
յայտնէ Պ. Փէշիվանեանին, այնպէս չ'է...:

ՊԵՏ. — Բնականաբար... գոհունակու-
թեան և շնորհակալութեան արժանի բան մ'է
Պ. Փէշիվանեանի այդ ըրածը...:

ՏԻՐ. — Դոհունակութեան և շնորհակա-
լութեան արժանի է նաև իր պաշտօնավարու-
թիւնը... իմ մասին հոգ չ'է... բայց անոր վե-
րաբերմամբ կարծիքներ փոխանակել կը խնդ-
րեմ թէ՛ ձեռնէ, թէ՛ Պ. Պաղտասարեանէն...:

ՅՈՎՃ. — Դադարած գրելէ. վերջա-
ցա՛ւ խօսքերնիդ...:

ՏԻՐ. — Այո՛...:

ՅՈՎՃ. — Լէ՛իմա ինչ կ'ըսէք ինձի որ
սա տեղ կազի հասոյթ ու սա տեղ գանա-
զան կարծիքներ գրած եմ, փոխանակ ներ-
կայցման հասոյթ ու գանազան ծախքեր
գրելու... Բարեկամներ:

ՊԵՏ. — Է՛հ գէշ չ'է... այդ ալ այն ը-
սել է...:

ՅՈՎՃ. — Ծօ՛, սախը վերն ալ պաշ-
խա բան գրած չ'ըլլաս, զիրա նշանու-
րի խօսքեր կ'ընէինք... ճշգրիտ մը հէկի մե-
տաքններու գոնքը չ'բռնաս մեր գլխուն...:

ՏԻՐ. — Կատակը մէկդի... ուշադիր ըլլա-
լուէ՛... մի՛ գուցէ սխալներ եղած լինին...:

կ'առնէ սեսուկը եւ այժի կ'անցնէ.
ՅՈՎՃ. — Մոտեցած սեսուկին կու-
րած հա՛, հա՛, հա՛, հա՛... սա պիտ-
պիտուն պիտու թէքաւրի գործած է...
Բարեկամ:

ՅՈՎՃ. — Չ'հանողը թոյ պղտի աղ-
ջիկը տայ, էֆէտի... գլանիկ ձիւ վա-
նած կը փաշտի մէկ կողմէ...:

ՍԱՐ. — Շատ աղէկ, շա՛տ աղէկ...
Թիւթիւնի սողորմ չ'ըրն...:

ՏԻՐ. — Այո երկուքն զատ ուրիշ սխալ
չ'կայ... եթէք, Պ. Պաղտասարեան զմեյթ-
նով քերեցէք ու շտիկեցէք ս'աւելի...:

ՍԱՐ. — Այո՛, այո՛... կրկրող նստի
մ'ալ պէտքը զգալի է... բայց տեղեկագրն
ու հաշիւներն, արձանագրութիւններն ալ
մի առ մի կարգաւու և վաւերացնելու ենք,
բան մը որ այս գիշեր չ'ենք կ'ընար ընել
այլեւ...:

ՅՈՎՃ. — Ասանկ ըլլալու չ'էր, աղ-
բար... մեր ամեն նիստերուն մէջ ամենը
նիս ալ գտնուելու էինք տայիմս ու մեր գոր-
ծերը ատենին ընելու էինք...:

ՏԻՐ. — Շատ իրաւացի են ձեր ըսած-
ները, Պ. Պէշիվանեան... բայց եղան և
զած է... հետեւաբար մենք միայն գիտնա-
լով մեր ներքին թերութիւններն, զայնս չ'եղ-
եալ նկատենք այժմէս և կրկին գոմարման
մը որոշումը տանք քանի որ կ'ուզեն ժող-
վականք...:

ՅՈՎՃ. — Կինէ իմ ըսածս եղա... ս-
ոաջուրնէ ըսի որ այս գիշեր ալ բան մը չը-
պիտի կրնանք ընել...:

ՍԱՐ. — Մաալէ (՛նաս չունի)... մա-
ալչներու երկրին մէջ կ'ապրինք...:

ՅՈՎՃ. — Մաալէ ամմա, ընդհ. ժող-
վոյ դիւանը բերանը ասանկ բացած է...:

ՅՈՎՃ. — Իրկայադիր քանալով
կուզէր նէ թող ասանկ բանայ... ստանալ
ինչ է որ չ'կրնար անել... սեսուկները
անբաճ. երբ, թաթօտան... պիտի երթաս
նէ, երթանք...:

ՊԵՏ. — Որոշեցէք. Տիր Ատենապետ,
կրք և ուր պիտի հաւաքուինք...:

ՍԱՐ. — Կեզրոն տեղ մը ըլլայ որոշ-
ուելիք տեղ...:

ՏԻՐ. — Մտածելով. Արտօթիի որձա-
բանը ինչպէս է...:

ՅՈՎՃ. ՍԱՐ. Պատուական...:

ՏԻՐ. — Վազը երեկոյ ժամը Տին կի-
նանք հաւաքուինք...:

ՄԻԻՄԵՆԵՐՆ. — Ինչո՞ւ չ'է...:

ՏԻՐ. — Լաւ ուրեմ... ես յանձն կ'առ-
նեմ վազը միամտայ տեղեկագիրը պատրաս-
տել, իսկ դուք, Պ. Պաղտասարեան, աշխա-
տեցէ՛ք որ անգամ մ'ես հաշիւներով չ'զբա-
ղինք...:

ՅՈՎՃ. — Ես վազը կէս ժամուան մէջ
կը լրացնեմ այն...:

ՏԻՐ. — Դուք ալ, Ատենապետը էք.
այս նստի արձանագրութեամբ փակեցէ՛ք ժո-
ղովոյս պաշտօնավարութեան շրջանը...
այնպէս համարեցէ՛ք որ տեղեկագիր, համարա-
տուութեան հրաժարագիր այս գիշեր պատ-
րաստուած ու զրկուած են առ ընդհ. ժող-
վոյ դիւանն...:

ՊԵՏ. — Ժողովը կ'ընդունի՛ այդ...:

ՄԻԻՄԵՆԵՐՆ. — Կ'ընդունինք. կ'ընդու-
նինք...:

ՏԻՐ. — Եւ ես կը փակեմ ատենանք...
ոսփի կ'եղի. իրեն կը հետեւին ձիւս
նետն: Մեկնինք ուրեմ...:

ՊԵՏ. ՅՈՎՃ. ՍԱՐ. — Մեկնինք...:

ՏԻՐ. — Պէշիվանեանի ձեռքը քոք-
ուելով. գիշեր բարի ձեզ, Պ. Պէշիվանեան.

ՅՈՎՃ. — Չեզ լոյս բարի. Ատենապետ
էֆէտի...:

ՊԵՏ. — Գիշեր բարի ձեզ Պ. Պէշիվանեան.
ՅՈՎՃ. — Չեզ լոյս բարի, Ատենապ-
պիւր էֆէտի...:

ՍԱՐ. — Գիշեր բարի ձեզ. Պ. Պէշիվ-
անեան...:

ՅՈՎՃ. — Չեզ լոյս բարի, խորհրդական
էֆէտի...:

ՅՈՎՃ. — Գիշեր բարի ընդ Պէշիվանեան.
ՅՈՎՃ. — Խոշոր լոյս բարի մ'ալ քեզի,
տեղի տօղը Գոնձապետ էֆէտի... շիտակ
պատկերու քնա՛, հա՛, պաշխա տեղեր չ'եր-
թաս...:

ՄԻԻՄԵՆԵՐՆ. — Գրանէ մէջ խնդա-
րով գիշեր բարի ձեզ, Պ. Պէշիվանեան, գի-
շեր բարի... Դեռք բարով...:

ՅՈՎՃ. — Չեզ լոյս բարի, ձեզ լոյս բա-
րի...:

Երթաք բարով... Ժողովականի կ'երթուն
եւ Պէշիվանեան քրան մէջ կանգնած
ես՝ ունին կը կայի...:

ՄԱՐՈՒՅԻ. — Կից սենեկի մը նեւ
կ'արդող սկիզբ պատուանէ մը գրախո-
րուրս կ'անում: Վայ պատմ ժողով վայ
... շիտակը բակիք չիայ... ասանկ ժողով
նէ եկած է, նէ ալ պիտի գայ. կ'ըլլեն վա-
րագոյրը(1): **ԳԻՌՈՒՍԱՆ**

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ

Ապրիլի Պապ-Էլ-Գարսի Է. աղ արակիւմ վոյ
եւ Նուարաճու ալ խմբի Զօւմուցի դիմացը
ՕՀԱՆՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ
ԴԱՆԻԷԼ ՀՈՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հասակի Զրօտարման և Գահիրէի
մէջ, որ կենդանաբար մը կարենայ ան-
ցրնել հանցարի ժամանայ մը. Ապրիլի
ընդարձակ հրապարակին զովագրին
օգը, վայրին սքանչելի գիւրքը, և սպաս-
ներուն մարտ թիւնը, ըմպելեաց ա-
նարատութիւնը, այս ամեն առաւելու-
թիւններով ԼԻՓՈՍ ԶԻՍՈՍՐԱՆԸ քիչ
ատենաւան մէջ յաջողած է ունենալ
յաճախորդներու պատկառելի թիւ մը,
որոնք ամեն իրիկուն, ժամագրու-
թիւն ըրած են, ու ժամերով կը վա-
յիլեն երկնիկ ընկերութիւն մը:


Ամեն կարգի զովարար, թարմ ու
անխառն ըմպելիներէ զտու մասնաւոր
խնամքով կը պատրաստուի ընտիր ըն-
տիր միգրել օչարակ. ամենէն դըժ-
ուարահաններն անգամ պիտի գոհ
մնան Եփրատէն:

ՃԱՃԱՐԱՆ ՀԱՅՎԱՄԱՆ

ՄԻՆԵՐՆ ԵՒ ԵՂՔ. ԳԱՅԷՆՃԵԱՆ
Շարա Ապու-Սապան
Նիեու-Տիվութեայ | Իւլ արսեմի դիմացը.

Օղատուն ու զուարճայի պիւր մա-
քուր ու վայելելի սպաս. համեղ ու
սնդարար կերակուրներու գանազա-
նութիւնն, անխաղախ պատրաստու-
թիւն. ճոխ ճաշացուցակ մը պիւրու-
մատչելի գիններով. ահա՛ Դազանձ-
եան եղբարց ճաշարանը:
Ի՞՞՞ որ կ'ուզէ, փորձի համար մէկ
անգամ թող գիւմէ, վտահ պէտք է
ըլլայ թէ մշտակալ յաճախորդը պիտի
դառնայ հայկական ճաշարանին:

(1) Շատ արգահատելի կը գտնենք «Ար-
շալոյսի մէջ երկրած մեկ հետեւող մը, նկա-
տելով որ նիւթին հետ պակասած է նաև այդ
պարտին անձինքներու մէկ մասն տարբեր
անուամբ չ'յարձրելու ազնուութիւնը: Եթէ
ինք չ'է խորհած, մենք իրեն զգացնել կա-
տանք որ իր գործն կապական ընդօրինակու-
թիւն մ'է կատարեալ, և թէ թող գիտնայ որ
ինչպէս «Ընկերութեան մը Գործ. Ժողովոյ
մէկ նիստն», նայնպէս ալ նայն ընկերու-
թեան դարձեալ «Նաս Ընդհ. Ժողովոյ»
վերագրով երկու արար գաւեշտն պատրաս-
տած ենք վաղուց, իբր շարունակութիւն ա-
սաջնոյն:



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ սպարանին մէջ կը տպուին ՆՈՐ ՕՐ, փիլիսոփայական, հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակազուկներ, պահարաններ, հաշուեցուցակներ եւն.:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով եւ ճարակաւոր սպագրութեամբ:

ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ

ԲԱՆԱՍԻՐ

ՀԱՆԴԵՍ

ՆԱԽՍԱԿԱՆ, ՊԱՍՄԱԿԱՆ, ԼԵՃՈՒԲԱՆՍԿԱՆ

ԵՒ ՔՆՆԱԿԱՆ

Կը հրատարակուի երեք ամիսն անգամ մը, տարեկան չորս գիրք:

ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՄԲ

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆԻ

Եւ աշխատակցութեամբ տպագրուին և տարարեւելագիտոց

ԲԱՆԱՍԻՐԻ տարեկան գինն է 20 ֆր. — 8 րբ. վեցամեայն՝ 10 ֆր. — 4 րբ.: Մէկ գիրքը կ'արժէ 6 ֆրանք: Բաժանորդագրութիւնը կանխիկ է: ԲԱՆԱՍԻՐը շատ քիչ քանակութեամբ տպուելուն համար, կը խընդրուի որ բաժանորդ գրուելու փափագ ունեցողները ժամ առ ժամ յայտենն իրենց հաճութիւնը:

ԲԱՑՈՒՄԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՀԱՅԱՊՈՏՈՒՄ“Ի

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆԻ

Գործս է հաւաքումն պատմաց Հայոց՝ ժամանակագրական կարգաւ, սկիզբէն մինչև ժ.է. գար: Հաւաքին աշխարհաբար լեզուաւ կը յաւելու բացատրութիւններ և ծանօթութիւններ իւրաքանչիւր էջին ներքե:

ՀԱՆԳԱՄԱՆԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Քառասնալ մեծագիր, չքեղ լիզիւթի վրայ, և պատկերազարդ:

Բաժանորդագրին է 30 ֆրանք կանխիկ ճանապարհի ծախքը մեր վրայ: Յետ աւարտման պիտի վաճառուի 30 ֆրանքի:

Բաժանորդագրութեան ժամանակ զեղը չի լինիր, բայց 10 օրինակ բաժանորդ գտնողին օրինակ մի ևս կը արուի ձրի:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐԱՑԱՆ

“ԼՈՒՍՒՆԵԱՆՔ”

ԳՐԵՑ

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

160 էջ, տպարան Վիեննայի Միլիթարեանց 1900, գինն է 2 ֆր.:

Կը ծախուի հետեւեալ պայմաններով:

Չորս հարիւր օրինակ Արտիկի Ուրբանոցին համար երեք հարիւր օրինակ Կիպրոսի Ուրբանոցին համար իսկ մընացած 300 օրինակը հեղինակին համար:

Հեղինակը այդ 300 օրինակները կը պահէ իւր ծախքերն հանելու և բարեկամներու նուիրելու համար իսկ միւս օրինակները բոլորովին անձեռնմխելի են և հեղինակը նուիրած է հայ յիշեալ երկու ուրբանոցներուն:

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

ՏԻԳՐԱՆ Հ. Ք. ՍԱՒԱԼԱՆԵԱՆԻ

Մարտը տպագրութեամբ և հեղինակին վիճակը պատկերով զարդարուած: 400 է աւելի էջերէ բաղկացեալ այն կենսագրական երկն իւր շահեկան պարունակութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնաց ընթերցման: Ինքնակենսագիրն, Չմիւռնիոյ հին ծանօթ գրական գէւքերէն մին, իր երուտագէժ, Աղեքսանդրիա, Իզմիր և Էօստէմիշ վարած ուսուցչական և այլ կարևոր պաշտօններու բերմամբ՝ ազգային և օտարազգի, եկեղեցական և աշխարհական նշանաւոր անձնաւորութեանց հետ ունեցած է զրաւոր և մտերմական յարաբերութիւններ, զորս գիտցած է ճարտար եղանակաւ մը խառնել իւր կենսագրական յուշերուն,

Le Gérant J. MUNIER

այնպէս որ ամբողջ գործը մէկ շունչով կարելի է կարդալ անձանձրոյթ և լարուած հետաքրքրութեամբ:

Որովհետև սակաւթիւ օրինակներ միայն տպուած են այն կենսագրական երկէ, փափագողք կրնան այժմէն ընել իրենց յանձնարարութիւնն՝ գիմելով:

ՏԻՄ ԿԱՐԱՊԵՑ ԵՐԶԵԿԱՅԵԱՆԻ

Շարա Ապսէլ-Ազիզ

ԿԱՄ ՏԻՄ ԿԱՐԱՊԵՑ ՆԱՒԱՍՏՐԻԵԱՆԻ

ԳԻՆ 5 ԴԱՂ. ՈՂՁ

ԿՈՒՋԷՔ ՈՒՆԵՆԱԼ

ՈՍԿԻ

ԿՈՒՋԷ ԼԱՐՈՒՈՂ ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԲՆՏԻՐ

ՃԱՍԱՑՈՅՑ ՄԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ԴՐՇ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷՔ

ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳԱՀԻՐԷ, ՄՈՒՍԻՔ ԳՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներ ու ամենազիւրաւմատչելի գնեքէն սկսելով մինչև ազամանդազարդ: Արժաթ ժամացոյցներ 30 զրուշէն սկսեալ: Նիքէլ ռումնութեամբ ժամացոյցներ 22 զրուշէն սկսեալ: Նաև սկիւ, արծաթ սկսեալ շղթաներ և գոհարեղէններ: Ինչպէս նաև պատի և գծնօթի բաղմազան բանտիւններ:

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, զրաւեղանի յատուկ, 10 զրուշի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կը բանին:

Ուրեմն գիմելէ՛ք ուղղակի

ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Տպա. «Միւլթիւն». — Թ. Ս. Փափագեանի

ՊԵԼԱՆԱՆ-ՅԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՉԱԿԵՐ

ԱՐԱՅ ԵՒ ՏԻԿԱՆՑ

ԵՒ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիքի մեծ պողոտային վրայ Ցայրայի Սանիթի դիմացը, նախկին երկօրական գործիներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան լիճ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմուլ Պատ. յաճախողները, գործի մաքրութեան, գիններու չափաւորութեան և ճշգրտագոյնութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագիրութեան դասեր ամերիկեան ամենալիւրջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին:

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ սը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գետնիկնը:

Կը բժշկէ բերնի և ակոսայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ԶՈՒԻԻՉ-ՄԵՔԵՆԱԳՐՈՐ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԱՐԱՐՔ

ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

— 0 —

Կը ձուլեն, կը չինեն երկաթէ ու արդոյրէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, և ըն., յաճախողները գոհացնող պայմաններով: